Կարգապահական գործ թիվ ԿԳ-26151

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՆԻԿՈԼԱՅԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Լուսինե Վիրաբյանի և դիմող Սուսաննա Դանիելյանի,

քննության առնելով փաստաբան Լուսինե Նիկոլայի Վիրաբյանի (արտոնագիր՝ թիվ 1750) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.

Սուսաննա Դանիելյանը (**այսուհետ՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ հայտնել է, որ 30.09.2024թ. փաստաբան Լուսինե Վիրաբյանի հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր (**այսուհետ՝ Պայմանագիր**), որի համաձայն վերջինս պարտավորվել է մատուցել հետևյալ ծառայությունները՝ նախապահանջի ներկայացում և դատական ներկայացուցչություն ԵԴ2/9439/02/24 քաղաքացիական գործով:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը գործը պատշաճ չի վարել, ինչի հետևանքով

Թիվ ԿԳ-26151-2-Ա
24.06.2026թ.

19.11.2025թ. դատարանը մերժել է հայցը՝ վերաբերելի և թույլատրելի ապացույցների բացակայության հիմքով:

Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանը դատական նիստերին ապացույցներ չի ներկայացրել, առաջին նիստին էլ չի ներկայացել՝ առանց նախապես տեղեկացնելու: Նա նաև չի տրամադրել գործին վերաբերող էական տեղեկություններ, վճռից հետո չի ներկայացրել պահանջված ապացույցները՝ նշելով, թե դրանք եղել են «բանավոր ապացույցներ», չի փորձել վեճը լուծել հաշտությամբ, ինչպես նաև չի տեղեկացրել, որ գործը վարվել է «ArmLex» համակարգով, ինչի հետևանքով դիմողը զրկվել է նյութերին ժամանակին ծանոթանալու հնարավորությունից:

Բացի այդ, դիմողը գործին ծանոթանալիս հայտնաբերել է, որ դատարանին չի ներկայացվել որևէ ապացույց, այդ թվում՝ պայմանագրի Հավելված 1-ը, Հավելված 2-ը և 27.09.2024-ի վերահաշվարկի փաստաթուղթը: Այդ հիմքով նա խնդրել է Փաստաբանների պալատում հարուցել կարգապահական վարույթ և Փաստաբանին ենթարկել պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 24.03.2026թ. Դիմողին առաջարկվել է համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 30.03.2026թ. ներկայացրած բացատրությամբ վերահաստատել է նախկինում արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև ներկայացրել որոշ ապացույցներ:

Այսպիսով, Դիմողը հատուկ ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ դատարանից գործի նյութերը ստանալուց և դրանք ուսումնասիրելուց հետո պարզել է, որ Փաստաբանը դատարանին չի ներկայացրել և չի ապացուցել, թե որքան է կազմել Ընկերության կողմից փաստացի կատարված աշխատանքների ընդհանուր արժեքը:

Նշված հանգամանքն էական նշանակություն է ունեցել գործի ճիշտ քննության համար, քանի որ դրա պարզաբանման արդյունքում հնարավոր կլիներ որոշել, թե Ընկերությունը որքան գումար է պարտավոր վերադարձնել Դիմողին:

Դիմողը նաև նշել է, որ հայցադիմումին կից չեն ներկայացվել նախահաշիվը և վերջնահաշիվը, որոնք էական նշանակություն ունեին գործի հանգամանքների լիարժեք և օբյեկտիվ գնահատման համար:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Լուսինե

Վիրաբյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Սուսաննա Դանիելյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 18.02.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 30.09.2024թ. Դիմողի հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր և նույն օրը Դիմողը տրամադրել է լիազորագիր իր շահերի արտադատական և դատական կարգով ներկայացնելու համար:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը վեճ ուներ կապալառու ընկերության հետ, որը չէր կատարել իր պայմանագրային պարտականությունները: Դիմողի հետ խորհրդակցելով՝ Փաստաբանը 02.10.2024թ. ուղարկել է նախադատական պահանջ, որը ընկերության կողմից մերժվել է: Այնուհետև, 08.11.2024թ. էլեկտրոնային դատավարության միջոցով ներկայացվել է հայցադիմում և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Հայցադիմումին կից ներկայացվել են ապացույցներ, մասնավորապես՝ կապալի պայմանագիր, վճարման անդորրագիր, նախադատական պահանջ և պատասխանը: Փաստաբանը հայտնել է, որ հայցադիմումին չեն կցվել Դիմողի տրամադրած այլ նյութերը, մասնավորապես՝ ընկերության աշխատակիցների լուսանկարները, ձեռագիր, մատիտով գրվածքներ, որոնք դատարանում չէին կարող ունենալ որևէ ապացուցողական նշանակություն:

Փաստաբանը հայտնել է, որ 03.03.2025թ. ժամը 15:30 նշանակված դատական նիստին չի մասնակցել, քանի որ տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, որի մասին Դիմողը տեղեկացվել է հաղորդագրությամբ և հեռախոսազանգով:

Փաստաբանը նշել է, որ 19.11.2025թ. հրապարակվել է վճիռը, որն ուղարկվել է Դիմողին: Միաժամանակ, Դիմողին պարզաբանվել է վերաքննիչ դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ, սակայն Դիմողը հրաժարվել է:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 24.03.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 31.03.2026թ. ներկայացրել է բացատրություն և ապացույցներ:

Փաստաբանը նշել է, որ դատարանում իր մասնագիտական պարտականությունները կատարել է պատշաճ կերպով և մասնակցել է գործով նշանակված դատական նիստերին:

Փաստաբանը հայտնել է, որ դատական ողջ գործընթացի ընթացքում մասնակցել

տեղեկացրել է Դիմողին գործի ընթացքի մասին, իսկ վճիռը ստանալու օրը այն ուղարկել է Դիմողին և տեղեկացրել վերաքննիչ դատարան բողոք ներկայացնելու իրավունքի վերաբերյալ:

Փաստաբանը նշել է, որ Դիմողի կողմից տրամադրված բոլոր ապացույցները ներկայացրել է դատարանին, բացառությամբ ընկերության առանձին աշխատակիցների լուսանկարների և մատիտով կատարված գրառումների, որոնց ներկայացման անհրաժեշտությունը, իր գնահատմամբ, բացակայել է:

Փաստաբանը նաև հայտնել է, որ դատարանի կողմից նման վճռի կայացման հիմքում դրվել են նաև պատասխանողի կողմից ներկայացրած դիրքորոշումները և ապացույցները: Այս առումով, հատկանշական է այն հանգամանքը, որ Դիմողը թաքցրել է Փաստաբանից որոշ ապացույցներ:

Փաստաբանը նշել է, որ դատարանը հանգել է սխալ եզրակացության և նշվածի հաշվառմամբ առաջարկել է Դիմողին բողոք ներկայացնել վերաքննիչ դատարան:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.03.2026թ. թիվ 251-Ա/ԿԳ-26151 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.5.5 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

10.03.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 08.05.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-9-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 08.05.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 24.06.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Լուսինե Վիրաբյանը ստանձնել է Դիմող Սուսաննա Դանիելյանի իրավունքների պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է 30.09.2024թ. կողմերի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:*

2. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները՝ նախապահանջի ներկայացում, դատական ներկայացուցչություն՝ քաղաքացիական գործով: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրով:*

3. Դիմողի և «Մեր անկյունը» ՍՊ ընկերության միջև 18.05.2024թ. կնքվել է թիվ 0014-24 Պ շինարարական կապալի պայմանագիրը: Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվել է կատարել ՀՀ, ք.Երևան, Պարույր Սևակ 51/11, 1013 բնակարանի նախահաշվարկով հաշվարկված աշխատանքները, որոնց նկարագրությունը սահմանվել է պայմանագրին կից հավելվածներում: Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ աշխատանքի գինը որոշվել է կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշվով և կազմել է 7.456.000 ՀՀ դրամ, որից 2.236.000 ՀՀ դրամը ենթակա է եղել վճարման որպես կանխավճար: *Սույն փաստը հաստատվում է 18.05.2024թ. թիվ 0014-24 Պ շինարարական կապալի պայմանագրի պատճենով:*

4. Փաստաբանը 02.10.2024թ. «Մեր անկյունը» ՍՊ ընկերությանն ուղղված նախադատական պահանջում նշել է, որ ընկերության կողմից կատարված աշխատանքների արժեքը, համաձայն պայմանագրի հավելված-նախահաշվի արժեքի, կազմել է 1.001.670 ՀՀ դրամ՝ 179.670+7.000+815.000 առանձին գումարների հանրագումարով: Նույն պահանջով Փաստաբանը պահանջել է Դիմողին վերադարձնել նախապես վճարված գումարից 1.234.330 ՀՀ դրամը: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից կազմված և ստորագրված 02.10.2024թ. նախադատական պահանջի պատճենով:*

5. «Մեր անկյունը» ՍՊ ընկերությունը 04.10.2024թ. նախադատական պահանջի պատասխանում վիճարկել է Փաստաբանի ներկայացրած՝ կատարված

աշխատանքների ծավալի և վերադարձման ենթակա գումարի հաշվարկը: Պատասխանող ընկերությունը նշել է, որ աշխատանքները դադարեցվել են Դիմողի նախաձեռնությամբ, իսկ կատարված աշխատանքների ծավալի և արժեքի վերաբերյալ եզրահանգումը պահանջում է համապատասխան մասնագիտական գնահատում: *Սույն փաստը հաստատվում է «Մեր անկյունը» ՍՊ ընկերության 04.10.2024թ. թիվ ԵԼ-0010/24 պատասխանով:*

6. Փաստաբանը 28.11.2024թ. էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով Դիմողի անունից հայցադիմում է ներկայացրել ընդդեմ «Մեր անկյունը» ՍՊ ընկերության՝ 1.721.360 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով, որից՝ 1.234.330 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված, սակայն չմատուցված ծառայությունների արժեքի վերադարձի գումար, 37.030 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար, 450.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանական ծառայության արժեք: Հայցադիմումում ևս նշվել է, որ պատասխանողի կողմից կատարված աշխատանքների արժեքը, համաձայն պայմանագրի հավելված-նախահաշվի արժեքի, կազմել է 1.001.670 ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է հայցադիմումով և թիվ ԵԴ2/9439/02/24 քաղաքացիական գործով 12.11.2025թ. վճռով:*

7. Պատասխանող ընկերությունը 30.01.2025թ. ներկայացված հայցադիմումի պատասխանով վիճարկել է կատարված աշխատանքների ծավալի, արժեքի և վերադարձման ենթակա գումարի չափի վերաբերյալ հայցվորի հաշվարկը և պահանջել է ներկայացնել այդ հաշվարկը հիմնավորող համապատասխան մասնագիտական եզրակացություն: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/9439/02/24 քաղաքացիական գործով 12.11.2025թ. վճռով, որում վերարտադրվել է պատասխանողի՝ 30.01.2025թ. ներկայացրած հայցադիմումի պատասխանի բովանդակությունը:*

8. Դատարանը 21.05.2025թ. որոշմամբ հայցվորի վրա դրել է, ի թիվս այլնի, պատասխանողի կողմից ծառայությունները ոչ պատշաճ մատուցած լինելու փաստն ապացուցելու պարտականությունը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/9439/02/24 քաղաքացիական գործով 12.11.2025թ. վճռի պատճեով:*

9. Դատարանը 12.11.2025թ. վճռով հաստատված է համարել՝ Դիմողի և պատասխանողի միջև շինարարական կապալի պայմանագրի կնքումը, Դիմողի կողմից պատասխանողին կանխավճար կատարելը, պատասխանողի կողմից ծառայությունները ժամկետի կետանցով մատուցելը:

Միաժամանակ դատարանը չապացուցված է համարել պատասխանողի կողմից պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու փաստը: Դատարանը հայցը մերժել է՝ արձանագրելով, որ հայցվորը չի ներկայացրել կատարված աշխատանքների ծավալը և չկատարված ծառայությունների արժեքը հաստատող բավարար վերաբերելի և

թույլատրելի ապացույցներ: *Սույն փաստը հաստատվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵԴ2/9439/02/24 քաղաքացիական գործով 12.11.2025թ. վճռով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լուսինե Վիրաբյանը փաստաբան է 06.10.2013 թվականից, և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում չի ունեցել կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լուսինե Վիրաբյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի կարող են արդյունավետ լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու**

ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է (կետ 3.1.2.):

Հանձնաժողովը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից: Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը կվկայի փաստաբանի մասնագիտական բարեխղճության նվազագույն չափանիշի պահպանման մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 3.5.5 և 2.7.2 ենթակետերը, որոնք նախատեսում են փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում

դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Տվյալ դեպքում Փաստաբանը 30.09.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով ստանձնել է Դիմողին նախապահանջ ներկայացնելու և քաղաքացիական գործով դատական ներկայացուցչություն իրականացնելու հանձնարարությունը: Հետևաբար, Փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվել Դիմողի տրամադրած փաստաթղթերը դատարան ինքնաբերաբար ներկայացնելով, այլ ներառել են վեճի փաստական և իրավական հիմքերի ամբողջական ուսումնասիրությունը, Դիմողի պահանջը հիմնավորող ապացույցների բավարարության գնահատումը և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապացույցներ ձեռք բերելու ու ներկայացնելու ուղղությամբ համապատասխան գործողությունների կատարումը:

Դիմողի և «Մեր անկյունը» ՍՊ ընկերության միջև կնքված շինարարական կապալի պայմանագրից հետևել է, որ կատարման ենթակա աշխատանքների նկարագրությունը սահմանված է եղել պայմանագրին կից հավելվածներով, իսկ աշխատանքի գինը՝ կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշվով: Այսինքն՝ Փաստաբանին դեռևս հանձնարարությունը ստանձնելու պահին հայտնի է եղել, որ պայմանագրի հավելվածները և նախահաշիվն անմիջականորեն առնչվել են վեճի առարկային՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների տեսակին, ծավալին և արժեքին:

Փաստաբանի կողմից կազմված 02.10.2024թ. նախապահանջում, իսկ հետագայում նաև հայցադիմումում նշվել է, որ պատասխանողի կողմից կատարված աշխատանքների արժեքը, «համաձայն պայմանագրի հավելված-նախահաշվի արժեքի», կազմել է 1.001.670 ՀՀ դրամ, որի հիման վրա վերադարձման ենթակա գումարը հաշվարկվել է 1.234.330 ՀՀ դրամ: Ընդ որում, նշված 1.001.670 ՀՀ դրամը ներկայացվել է առանձին գումարային բաղադրիչների հանրագումարով: Հետևաբար նախահաշվին կատարված հղումը դրվել է Փաստաբանի կողմից ներկայացված պահանջի չափի և դրա փաստական հիմնավորման հիմքում:

Կարգապահական վարույթի ընթացքում Փաստաբանը հայտնել է, որ պայմանագրի նախահաշիվն իրեն չի տրամադրվել: Միաժամանակ, նրա կողմից կազմված նախապահանջում և հայցադիմումում կատարված աշխատանքների արժեքը նշվել է 1.001.670 ՀՀ դրամ և ներկայացվել որպես պայմանագրի հավելված-նախահաշվից բխող հաշվարկ: Հանձնաժողովը գտնում է, որ անկախ նշված հաշվարկի ձևակերպման եղանակից՝ Փաստաբանը պարտավոր էր ստուգել դրա հիմքում ընկած տվյալների

արժանահավատությունը, պահանջել հաշվարկը հիմնավորող փաստաթղթերը և գնահատել դրանց ապացուցողական բավարարությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից նախահաշիվը ստացված չլինելու հանգամանքը, նույնիսկ այն հաստատված համարելու դեպքում, նրան չի ազատել մասնագիտական համապատասխան գործողություններ կատարելու պարտականությունից: Ընդհակառակը՝ իմանալով, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների նկարագրությունը և արժեքը սահմանված են հավելվածներով ու նախահաշվով, Փաստաբանը պարտավոր էր Դիմողից պահանջել այդ փաստաթղթերը, պարզել հայցապահանջի հիմքում դրված հաշվարկի ծագումն ու արժանահավատությունը և միայն դրանից հետո որոշել ներկայացվող պահանջի չափը:

Մինչդեռ կարգապահական գործի նյութերից չի հետևում, որ Փաստաբանը մինչև հայցի ներկայացումը կամ դատական քննության ընթացքում Դիմողից պահանջել է նախահաշիվը, պայմանագրի համապատասխան հավելվածները կամ կատարված աշխատանքների արժեքի հաշվարկը հիմնավորող այլ փաստաթղթեր: Չի հաստատվում նաև, որ նա Դիմողին տեղեկացրել է այդ նյութերի բացակայությամբ պայմանավորված ապացուցողական ռիսկերի և հայցի հնարավոր մերժման մասին: Նախահաշիվը, հնարավոր է, ինքնին բավարար չլիներ փաստացի կատարված աշխատանքների ծավալն ու արժեքը հաստատելու համար, քանի որ այն արտացոլել է կողմերի միջև նախապես համաձայնեցված աշխատանքներն ու դրանց պայմանագրային արժեքը, այլ ոչ թե պարտադիր կերպով՝ պատասխանողի կողմից փաստացի կատարված աշխատանքների իրական ծավալը: Սակայն դա չի նշանակում, որ նախահաշիվը գործի լուծման համար նշանակություն չի ունեցել: Այն անհրաժեշտ ելակետ է եղել պայմանագրով նախատեսված և փաստացի կատարված աշխատանքները համադրելու, չկատարված աշխատանքների շրջանակը որոշելու, ինչպես նաև համապատասխան փորձագետի առջև հարցադրումներ ձևակերպելու համար: Հետևաբար Փաստաբանի բացատրությունն այն մասին, որ նախահաշիվը գործի համար նշանակություն չի ունեցել, հակասում է ինչպես իր իսկ կազմած նախապահանջի և հայցադիմումի բովանդակությանը, այնպես էլ վեճի փաստական բնույթին:

Ավելին՝ դեռևս 04.10.2024թ. նախապահանջի պատասխանում պատասխանող ընկերությունը վիճարկել է Փաստաբանի կողմից ներկայացված հաշվարկը և ուղղակիորեն մատնանշել համապատասխան մասնագիտական գնահատման անհրաժեշտությունը: Պատասխանողը նաև 30.01.2025թ. ներկայացված հայցադիմումի պատասխանում պահանջել է ներկայացնել հայցապահանջում նշված աշխատանքների ծավալն ու գումարի չափը հիմնավորող՝ համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձի եզրակացություն: Այսպիսով՝ վերադարձման ենթակա

գումարի հաշվարկի ապացուցողական անբավարարության հարցը Փաստաբանին հայտնի է եղել ոչ միայն գործի քննության ընթացքում, այլև մինչև հայցադիմումը դատարան ներկայացնելը: Այնուհետև դատարանը 21.05.2025թ. ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ Դիմողի վրա դրել է, ի թիվս այլնի, պատասխանողի կողմից ծառայությունները ոչ պատշաճ մատուցած լինելու փաստն ապացուցելու պարտականությունը: Այս որոշմամբ Փաստաբանի համար վերջնականապես հստակեցվել է, որ իր վստահորդի պահանջի բավարարումը կախված է պատասխանողի կողմից կատարված աշխատանքների փաստացի ծավալի, արժեքի և պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման փաստի ապացուցումից:

Կատարված շինարարական աշխատանքների փաստացի ծավալի և արժեքի, պայմանագրով նախատեսված աշխատանքներին դրանց համապատասխանության, ինչպես նաև կատարված աշխատանքների և վճարված կանխավճարի հարաբերակցության պարզաբանումը պահանջել է հատուկ մասնագիտական գիտելիքներ: Նշված հարցերի վերաբերյալ դատարանը չէր կարող հիմնավոր եզրահանգման գալ միայն Դիմողի կամ Փաստաբանի կողմից կատարված թվային հաշվարկի հիման վրա:

Այս համատեքստում Փաստաբանը պարտավոր էր գնահատել համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը և, եթե գտնում էր, որ դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու հիմքեր չկան, ներկայացնել օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված այլ համարժեք ապացույցներ: Այդպիսի ապացույց կարող էր լինել նաև գործին մասնակցող անձի կողմից ներկայացված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանող փորձագետի եզրակացությունը կամ կատարված աշխատանքների ծավալն ու արժեքը հավաստող այլ վերաբերելի և թույլատրելի ապացույց: Փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը գնահատելու պարտականությունը լրացուցիչ բխում էր նաև վեճի բնույթից և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 718-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ աշխատանքի թերությունների վերաբերյալ վեճի դեպքում փորձաքննություն նշանակելու հնարավորությունից:

Մինչդեռ գործի նյութերից չի հետևում, որ Փաստաբանը դատարանին ներկայացրել է փորձաքննություն նշանակելու միջնորդություն կամ կատարված աշխատանքների իրական ծավալն ու արժեքը հաստատող որևէ այլ ապացույց: Փաստաբանը չի ներկայացրել նաև մասնագիտական հիմնավորում, թե ինչու փորձաքննությունը տվյալ գործով անհրաժեշտ չի եղել և ինչ այլ ապացուցողական միջոցով էր նախատեսում կատարել իր վստահորդի վրա դրված ապացուցման պարտականությունը:

Դատարանը 12.11.2025թ. վճռով հաստատված է համարել կողմերի միջև շինարարական կապալի պայմանագրի կնքման, կանխավճարի կատարման և ծառայությունները ժամկետի կետանցով մատուցելու փաստերը, սակայն հայցը մերժել է այն հիմքով, որ հայցվորը չի ապացուցել պատասխանողի կողմից պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու փաստը, մասնավորապես՝ որ փաստացի կատարված աշխատանքների ծավալը համարժեք չի եղել վճարված գումարին: Դատարանը հատուկ արձանագրել է, որ քաղաքացիական գործում բացակայել է նախահաշիվը կամ որևէ այլ ապացույց, որը հնարավորություն կտար ձևավորելու հիմնավոր դիրքորոշում կատարված աշխատանքների ծավալի և չկատարված ծառայությունների արժեքի վերաբերյալ:

Հանձնաժողովն ընդգծում է, որ դատական գործի անբարենպաստ ելքն ինքնին չի կարող վկայել Փաստաբանի կողմից կարգապահական խախտում կատարելու մասին, և Փաստաբանը պատասխանատու չէ դատարանի կողմից իր վստահորդի օգտին դատական ակտ չկայացնելու համար: Սույն գործով Փաստաբանի վարքագծի գնահատման հիմքը ոչ թե հայցի մերժման փաստն է, այլ այն, որ նա չի կատարել հանձնարարության պատշաճ իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական գործողությունները:

Մասնավորապես՝ Փաստաբանը՝

1. հայցապահանջի հիմքում դրել է պայմանագրի նախահաշվից ենթադրաբար բխող կոնկրետ արժեքային հաշվարկ՝ առանց նախահաշիվն ստանալու և ուսումնասիրելու,
2. չի պահանջել Դիմողից հայցի հիմքում ընկած հաշվարկը հաստատող փաստաթղթերը,
3. նախապահանջի փուլում և դատական քննության ընթացքում պատասխանողի կողմից հաշվարկի հիմնավորվածությունը վիճարկվելուց հետո չի ձեռնարկել այն բավարար և արժանահավատ ապացույցներով հիմնավորելու անհրաժեշտ գործողություններ:
4. դատարանի կողմից ապացուցման պարտականությունը հստակ բաշխվելուց հետո չի միջնորդել համապատասխան փորձաքննություն նշանակել և չի ներկայացրել համարժեք այլ ապացույց,
5. չի հիմնավորել, թե առկա ապացույցներով ինչպես էր նախատեսում ապացուցել կատարված աշխատանքների ծավալի և վճարված գումարի անհամարժեքությունը:

Վերոնշյալ հանգամանքներն իրենց համակցությամբ վկայում են, որ Փաստաբանը պատշաճ չի ուսումնասիրել Դիմողի հանձնարարությանը վերաբերող բոլոր

հանգամանքները, չի գնահատել հայցի փաստական հիմքերը հաստատող ապացույցների բավարարությունը և չի կատարել հանձնարարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ գործողությունները:

Նման վարքագիծը չի կարող գնահատվել որպես Փաստաբանի կողմից դատավարական մարտավարության թույլատրելի ընտրություն: Դատավարական մարտավարությունն ինքնին ենթադրում է մի քանի իրավաչափ և մասնագիտական առումով ողջամիտ միջոցներից որևէ մեկի գիտակցված ընտրություն: Մինչդեռ տվյալ դեպքում Փաստաբանը չի ներկայացրել այնպիսի այլընտրանքային ապացուցողական մոտեցում, որով հնարավոր կլիներ հաստատել իր իսկ ներկայացրած պահանջի հիմքում դրված առանցքային փաստը:

Հանձնաժողովը գտնում է նաև, որ խախտումը կատարվել է կոպիտ անփութությամբ: Փաստաբանին հայցապահանջի հաշվարկի մասնագիտական հիմնավորման անհրաժեշտության մասին մատնանշվել է բազմիցս՝ նախ պատասխանողի 04.10.2024թ. նախադատական պատասխանով, այնուհետև՝ հայցադիմումի պատասխանով, իսկ հետագայում դատարանի՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին 21.05.2025թ. որոշմամբ: Չնայած դրան՝ Փաստաբանը չի ձեռնարկել առաջացած ապացուցողական խնդիրը վերացնելու համար անհրաժեշտ գործողություններ:

Նշված հանգամանքները վկայում են վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ հետևողականություն չդրսևորման մասին:

Հանձնաժողովը հիմնավոր չի համարում Փաստաբանի բացատրությունն այն մասին, որ պատասխանող ընկերությունը հայցադիմումի պատասխանով ընդունել է պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու փաստը: Պատասխանողի դիրքորոշման ամբողջական բովանդակությունից հետևում է, որ վերջինս ընդունել է աշխատանքները պայմանագրով նախատեսված ժամկետում չավարտելու հանգամանքը, սակայն ուղղակիորեն վիճարկել է կատարված աշխատանքների ծավալի, արժեքի և վերադարձման ենթակա գումարի չափի վերաբերյալ հայցվորի հաշվարկը՝ պահանջելով այն հիմնավորել համապատասխան մասնագիտական եզրակացությամբ: Նշված հանգամանքների տարբերակված գնահատական է տվել նաև դատարանը՝ հաստատված համարելով ծառայությունները ժամկետի կետանցով մատուցելու փաստը, սակայն չապացուցված համարելով պատասխանողի կողմից պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու փաստը: Հետևաբար ժամկետի կետանցի ընդունումը չէր ազատում հայցվորին ոչ պատշաճ կատարման և դրանից բխող վերադարձման ենթակա գումարի չափն ապացուցելու պարտականությունից:

Փաստաբանը չէր կարող ապավինել պատասխանողի ենթադրյալ «ընդունմանը» և չներկայացնել նախահաշիվը կամ փորձաքննություն նշանակելու միջնորդությունը: Ընդհակառակը՝ պատասխանողի առարկությունից հստակ երևում էր, որ վեճի առանցքային փաստը շարունակում էր վիճելի մնալ և պահանջում էր ապացուցում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը խախտել է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Սույն գործով Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի շահերի դատական պաշտպանությունը, պատշաճ չի ուսումնասիրել հայցապահանջի փաստական և ապացուցողական հիմքերը և չի կատարել հանձնարարության պատշաճ իրականացման համար անհրաժեշտ գործողությունները: Մասնավորապես՝ նա չի ապահովել կատարված աշխատանքների ծավալը և արժեքը հիմնավորող ապացույցների ներկայացումը, իսկ դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելուց հետո չի միջնորդել փորձաքննություն նշանակել կամ ներկայացրել համարժեք այլ ապացույց: Դրա հետևանքով գործի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող փաստը մնացել է չապացուցված, ինչը դատարանը նշել է որպես հայցի մերժման հիմք:

Միաժամանակ Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես՝ գործող կարգապահական տույժերի բացակայությունը: Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ «նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը համաչափ է կատարված խախտման բնույթին, հետևանքներին և մեղքի աստիճանին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Լուսինե Նիկոլայի Վիրաբյանի (արտոնագիր՝ թիվ 1750) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26151-2-Ա
24 հունիսի 2026թ.
ք.Երևան